

10. - Բարգաւանում եւ կարգաւորութիւն պաշտամունքի. — Դիտելի է որ մեծագոյն բարգաւանումը տեսանք այս շրջանիս՝ քան բոլոր նախորդներուն՝ Աղօթանոցին բովանդակութեան մէջ, որ հասած է գրեթէ իր վերջին կատարելութեան, ի բաց առեալ Հանգստեան ժամը՝ որ տակաւին հասարակաց աղօթքին մէջ է մտեր:

Շարահնոցն ալ այս շրջանիս դասած է իր կազմութիւնը, սակաւ շարահաններու պակասով, 1287ի եւ 1295ի երկցագոյն օրինակներու մէջ, դրուած Սիւ: Որո՞նց կը պարտինք այդ արդիւնքը: Չենք կարող դրականապէս մասնաւորել անոնք. բայց դիտենք հայրապետներ՝ որ յատուկ խնամք ցոյց տուած են աղօթքի բարեկարգութեան: Այսպէս Գրիգոր Վկայասէր հեղինակ եղաւ սուրբերու տօներու բազմացման ու Տօնամակին: Տեսանք Ն. Շնորհալիի գործօնէութիւնն ալ ուղղակի

պճնելու պաշտամունքը՝ յատկապէս երգերով եւ կարգաւորութեամբ ժամապաշտութեան:

Գալով Կիլիկեան յաւելումներուն, յիշեցինք Կոստանդին Ա.ի ժողովին կատարած մէկ սրբազրութիւնը ժամապաշտին մէջ. եւ ատոր հետ կը սահմանեն «պսուրբ գիրս եկեղեցւոյ դրել արուեստաւորաց եւ դիտնոց եւ ուղղափառաց» (Կիր. 170): Կը կարգանք եւ Լամբրոնացի Գէորգ Վ.ի մասին (+ 1301) թէ «առնէր եւ դանձալովս տօնից տէրունականաց եւ սրբոց Աստուծոյ» (Պտմ. Հիկ. Դպր. 601): Կիլիկիոյ մէջ ալ եղան, ուրեմն, նախանձալոյ հոգիներ՝ որ դեր ունեցան հասարակաց պաշտամունքի պճնադարութեան մէջ, եւ անոնց դործն է այս ժամանակի յաւելումները:

(Շարունակելի)

Հ. ՎԱՐԴԱՆ ՀԱՅՈՒՆԻ

ԵՐԿՈՒ ԽՕՍԲ՝ ԽՄԲԱԳԻՐՆԵՐՈՒՆ

Վերջերս, Սփիւռքի կարգ մը քերթերուն մէջ տեսանք «Բագմավէպ»էն արտատպումներ. դժբախտաբար, հեղինակի ստորագրութեան հետ, չէր նշանակուած աղբիւրը:

«Բագմավէպ»ի խմբագրութիւնը դիմեց ուղղակի հեղինակներուն, իմանալու համար՝ թէ արդեօք յօդուածագիրներն իրե՞նք են որ ուրիշ քերթերու ալ զրկեր են իրենց ուսումնասիրութիւնները: Ժխտական պատասխան ստացան:

Յօդուածագիրներէն ոմանք ալ իրենք դիմեցին մեզի, իմանալու համար՝ թէ ինչո՞ւ մեր խմբագրութեան ուղղած իրենց յօդուածը լոյս կը տեսնէ նաեւ ուրիշ քերթերու մէջ:

Պատասխանեցին՝ արդարացելով մեր խմբագիրները, եւ պաշտպանեցին արտատպումի իրաւունքը, անուշադրութեան հետեւանք մկատելով եղածը:

Ուստի, ամէն արտատպում քոյլատրելով — եւ այդ՝ յանուն հայ մշակոյթի տարածման — փափաքելի է որ արտատպուած ամէն յօդուածի տակ, մեր քերթէն եւ կամ ուրիշ տեղէ, նշանակուի նաեւ աղբիւրը, չակերտներու մէջ, ինչպէս սովորութիւն է:

ԽՄԲ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԵՐԲԵՐԸ

(Շար. տիւս «Բագմավէպ» 1960, թ. 11-12, էջ 292)

ՀԱՆԴԱԲԵՐԴ

Սիւնեաց աշխարհի նշանաւոր բերդերէն մէկն է Հանդաբերդը, որու հիմնադիր կը համարուի ըստ Մովս. Կաղանկատուացիի Ապրամ Ատրնբրես՝ որդի Սալի. «որ ի Տոհակայ եւ տէր Սիւնեաց, սա չինէ ըզբերդն Հանդու, եւ զապարանս իւր անդ եղեալ ի գիւղն՝ որ կոչի Վայկունիք»¹: Բերդը հաւանաբար շինուած է Բագրատունեաց իշխանութեան շրջանին, եւ ապա անցած Սիւնեաց իշխաններուն ձեռքը. այժմ կը կոչուի Լեւա-դալա: Մովսէս Կաղանկատուացի պատմիչն է որ այս բերդին մասին երկար ծանօթութիւններ կու տայ. եւ Ատրնբրես, որ շինողն էր բերդիս՝ ինչպէս տեսանք, գերի կ'երթայ Պարսկաստան եւ ժամանակ մը վերջ վերադառնալով կը վախճանի, ձգելով իր ժառանգութիւնը իր երկու որդիներուն՝ Գրիգորի եւ Ասուէթի:

Գրիգոր կը չինէ Հաւախացի բերդը, եւ հոն քաշուելով կ'իշխէ այդ շրջաններուն վրայ: Ասուէթ չուտով կը մեռնի եւ վրայ: Ատրնբրես կը շուտով կը մեռնի եւ Հանդաբերդը կը մնայ Գրիգորի. ասիկա կ'ունենայ հինգ որդի. երէց որդին չուտով կը սպաննուի հակառակորդներէն. միւս որդին Սահակ, որ Սեւադա ալ կոչուած է, իր քաջութեամբ կը տիրէ շրջակայ երկիրներուն. ասիկա ուսումնասէր իշխան մը եղաւ, գիրն ու գրականութիւնը ծաղկեցուց իր երկրին մէջ, նութիւնը ծաղկեցուց իր երկրին մէջ, զպրօններ բացաւ. իր դէմ էլաւ Սմբատ Բագրատունի թագաւորը 890-914ի առեւները, բայց բան մը չկրցաւ ընել. Սեւադա ունեցաւ երկու որդի, Գրիգոր եւ Դաւիթ:

Գրիգոր կ'ունենայ երկու որդի, Սեւա-

դա՝ որ Իշխան անունով ծանօթ է, եւ Ատրնբրես: Իշխան կը ծնանի չորս որդիներ. փոքր որդին որ Ատրնբրես կը կոչուէր, յետոյ կոչուեցաւ Սենեքերիմ. ասիկա իր քաջութիւններուն համար թագաւորական պատուին հասաւ, Պարսից թագաւորէն ստանալով թագ եւ դաւադան. այս լուրն առնելով՝ յունաց կայսրը, ինքը եւս թագ եւ դաւադան կը զրկէ եւ հանդիսաւոր կերպով թագաւոր կ'օծուի հայրապետէն:

Հանդաբերդի պատմութիւնը անծանօթ կը մնայ մինչեւ ԺԲ դար. այնուհետեւ դարձեալ կը փայլի նոր իշխանութեան յայտնուելով. Դովեաններու իշխանութիւնն է ատիկա²:

Դովեաններու իշխանութիւնը
Հանդաբերդի մէջ

ԺԲ. դարուն Հանդաբերդի վրայ կ'իշխեն Դովեանները. ասոնք ծագումով առաջ եկած են Ջաքարէի եւ Իւանէի քրոջ Դովի-ի սերունդէն եւ կոչուած Դովեանք: Դովի Ջաքարեան Սարգիս իշխանին աղջիկն էր, եւ ամուսնացած էր Սաչէի իշխան՝ Հասանի հետ, եւ ոչ թէ Ղարա Գրիգորի հետ, ինչպէս ցոյց կու տայ Գարեգին Կթղ. իր Սագրականք գրքին մէջ³:

Հասանի որդին էր Գրիգոր, որ ամուսնացած էր Ասփայի հետ. Ասփա, որ աղջիկն էր Տարսաշի իշխանին, հարուստ նուէրներով եւ հողերով հարս՝ կու դայ եւ կը զարգարէ իր երկիրը եկեղեցիներով եւ վանքերով: Սակայն ըստ Կարապետ եպիսկոպոսի, Դովի եւս իր պապենական ժառանգութեան շատ մը հողեր օժիտ կը բերէ իր ամուսնուն. այս ենթադրութիւն-

1. Մովսէս Կաղանկատուացի, էջ 69-71:

2. Արցախ, էջ 281-291:

3. Սագրականք Ա. էջ 19-20:

նը կրնայ ճիշտ ըլլալ. որովհետեւ Դոփեաններու իշխանութեան սահմաններուն մէջ էր, ԺԳ. դարուն կէսին, Սեւանի լըճին ամբողջ հարաւակողմը, Գեղարքունիքի մեծագոյն մասը՝ որ կը պատկանէր Աթաբէկ Իւանէի: Այս մասին Թարգմանչաց վանքի Աւետարանի մը յիշատակարանին մէջ կը կարդանք հետեւեալը, գրուած 1312ին, ուր Դոփեանները զիւրեք կ'անուանեն «Ականոյ, Հանդաբերդի, Սոթից, Շողգանայ եւ այլ բազում գաւառաց տէր»⁴. ուրեմն շատ հաւանական էր որ Դոփ ընդարձակած ըլլայ այս իշխանութեան սահմանները:

Կը շարունակուի որդիէ որդի Դոփեաններու իշխանութիւնը, կը յիշուի Սարգիս անունով իշխան մը եւս որ «գրազում արդիւնս արարեալ. եւ մի ի բազմացն զգեղեցիկ զանգականին ի խաթրի վանս ի Գետամէջ»⁵: Իսկ Սարգիս կը յաջորդէ Հասան Ծարեցի, որ սպաննուած է 1384ին եւ իր իշխանութիւնը շարունակած են իր որդիները. եւ որովհետեւ չեն կըցած սիրով ապրել, բաժնած են իրենց ժառանգութիւնը իրենց մէջ. եւ այսպէս Դոփեան տունը բաժնուած է զանազան ճիւղերու: Հասանի որդիներէն էին Աղբուկէն, ասոր որդին Տուրսանն, եւ ասոր Այտենն: Այս վերջինին ժամանակ արարները զօրանալով եւ օգտուելով հայ իշխաններու բաժանումէն, կու գան եւ կը տիրեն մէկիկ մէկիկ հայ իշխանական տուններուն. Այտենը կ'երթայ Դուին եւ երեք տարի հոն մնալէ վերջ՝ սիրելի կ'ըլլայ արար իշխանութեան եւ կ'ազատէ շատ մը հայ վանքեր եւ եկեղեցիներ:

Կիրակոս պատմիչ վերջին անգամ մը եւս կը յիշէ Դոփեան իշխանութեան սահմանները «ի սահմանս Գեղարքունոյ ծովուն ի կողմն խաչնոց հուպ ի բերդն Հանդաբերդ, ուր ջերմուն էր Ծարանուն»⁶:

4. Թօփեան Յուլիան ԺԳ. 89: Մանանդեան էջ 156-157: ԺԳ. դարերի հայ ձեռ. էջ 84:
5. խաղաղեանը Ա. էջ 23-24 եւ Պատմ. հայ. սահմ. էջ 348:

Հաւանաբար արարական արշաւանքէն վերջ լքուած է բերդը եւ քանդուած արշաւողներէն:

Կ'արժէ որ հոս մէջ բերենք վերջին նշանակալից փոփոխութիւնը. Բարխուդարեանէն, որ ակնհայտ եղած է եւ մանրամասն նկարագրած է բերդին արդի վիճակը:

«Բերդս հիմնուած է մի միապաշտելու ձեռնաձեռն բարձրացած ապառաժի վրայ, որ առանձնացած է իր չորս կողմերէց: Բերդաբարձ ժայռիս հիւսիսէն խոր անդունդի մը մէջէն կը հոսի Թարթար գետի մէկ օժանդակը. ոչ ինչ պակաս ձոր է, եւ հարաւը միայն մի թրածեւ շերտով միացած է ցամաքին եւ բերդասարին, որուն վրայ է Լեւա դիւղը:

Բերդը շատ բարձր է եւ շատ նեղ ճանապարհէ մը դժուարաւ կարելի է վերելլել: Ունի կիսաւեր դուռ մը, որուն մօտ է դռնապանները վիճափոր այրը:

Բերդին մէջ կայ եւ եղած է նաեւ ներքին բերդ մը, որ շատ ամուր շրջապարիսպ մը ունի եւ բազմաթիւ բուրգեր, 100 Մ. երկար, 80 Մ. լայն. 6, 10 է պարիսպի բարձրութիւնը եւ միայն մի դուռ ունի, նշանաւոր ամրութիւն եւ պաշտաման ձեւ: Մակերեսի վրայ կայ ցորենի եւ ալիւրի ամբար, հաց եփելու փուռ եւ ուրիշ շինութիւններու հետքեր. ամէն ինչ կատարեալ է, միայն ափսոս որ ջուր չունի. սակայն ունի 7 խոր հորեր վիճափոր, որոնք կ'երկարին 5 մ. դէպի արեւելք եւ 5 մ. դէպի արեւմուտք. նեղ են բոլոր հորերուն բերանները:

Այժմ բերդումս կան բուսած ծառեր. սակայն հետզհետէ ժամանակի մշտադուրծ մուրճը կը քանդէ ամէն ինչ»⁷:

ՀԱՐԱԿԵՐԸ ԲԵՐԴ

Շին եւ անուանի բերդաքաղաք մըն է, Կուր գետի վրայ, Չորափորի հարաւը, Հայաստանէն դուրս⁸:

6. Կիրակոս էջ 182:
7. Արցախ, էջ 409-410:
8. Հիւլաքման, անդ, էջ 370:

Խորենացի խօսելով նահապետներու մասին, ԱՌԱՆ նահապետին կու տայ Հնարակերտի շինութիւնը: Հնարակերտ այն ատեն Աղուանից երկրին մաս կը կազմէր, ուր կը տիրէր Սիսական ցեղը, եւ որմէ էր Առան նահապետ, «որ տիրէր ի գետոյն Երասխայ մինչեւ ցամուրն» որ ասի Հնարակերտ»⁹:

Առանի կը յաջորդէ իբրեւ ժառանգ ԳՈՒՇԱՐ, «յորդուցն Շարայի, որ ժառանգէ զլեւոն Մթին, որ է Կանգարք, մինչեւ ցամուրն Հնարակերտ»¹⁰:

Մ. Կաղանկատուացի եւս Առան նահապետին տալով Հնարակերտի շինութիւնը, կը գրէ թէ «ժառանգեաց զգալտերս աղուանից ի գետէն Եփրատայ մինչեւ ցամուրն Հնարակերտ»¹¹:

ՀԱՐԱԿԵՐԸ Աղուանից սահմանային բերդերէն է, ուր իշխած են փոխ ի փոխ երբեմն հայերը եւ երբեմն աղուանները:

Հնարակերտ շինուած էր Կուր եւ խրամ գետերուն մէկ եռանկիւնին վրայ. խրամ գետը այնքան մաշեցուցեր էր գետին հունը, որ եռանկիւնաձեւ անառիկ դիրքի մը վերածեր էր: Բերդը կը բաժնուէր երեք մասերու. ստորին, միջին եւ վերին ամրոց. պարիսպը շինուած էր թրծուած աղիւսով, եւ ունէր չորս աշտարակներ, իր չորս անկիւններուն վրայ 120 մ. շրջապատով: Այժմ կործանած է ամրոցը, բայց դեռ կանգուն կը մնան աշտարակները եւ պարսպէն մեծ մաս մը:

Ամրոցը Կուր գետին կողմը այնպիսի լանջեր ունի, որ անկարելի է որ թշնամին կարենայ մօտենալ. բերդին մէջ գտնուած են հին աղիւսի կտորներ, յախճապակի անոթներ, կոպիտ եւ հաստ կարասիներ: Կան նաեւ գերեզմաններ, բայց անոնց տապանաքարերը ուրիշ տեղ փոխադրուած են:

Հայոց Արրահամ Կաթողիկոսը, է. դարուն սկիզբը, իր առ Կիւրիոն գրած մէկ նամակին մէջ թուարկելով վրաց եպիսկոպոսները, կ'ըսէ. «Իսահակ եպիսկոպոս ՀՆԱՐԱԿԵՐԸ»: Ակներեւ է որ է. դարուն վրացիները Հնարակերտ քաղաք մը չունէին խրամ գետին աջ ափին. ուրեմն այս տողերը կ'ակնարկեն հայ վրացական սահմանին վրայ գտնուող ՀՆԱՐԱԿԵՐԸ¹²:

ՀԱՐԱԿԵՐԸ

Հրաշկարերդը կը գտնուի Վայոց Ձոր գաւառին մէջ. կոչուած է նաեւ ՀԱՍՍԵ-ԿԱՅ բերդ, կամ ՀԱՍՏԿԱՅԵՐԴ. շինուած հաւանօրէն Հրաշկէն¹³:

Ասիկա կը հաստատէ Ստ. Օրբելեան ըսելով. «կառուցեալ ի մէջ երկուց անդընդախոր ձորոց, ի ՀԱՍՏԿԱՅ շինեալ»¹⁴: Սակայն աւանդութեան մը համաձայն՝ Սմբատ սպարապետին կը տրուի անոր շինութիւնը. աւելի հաւանական է որ Սմբատ սպարապետի վերանորոգած ըլլայ այս բերդը¹⁵:

Հրաշկարերդի շինութեան թուականը անորոշ կը մնայ. սակայն անոր տեղը յայտնի է, «ի սահմանս յԱրամամուր գեղջն, մերձ Նորավանից, իբր դիտանոց բարձր՝ հայէր ի վերայ դաշտին Շարուրայ»¹⁶: Այժմ բերդին բուն տեղը որոշ չէ, քայքայուած եւ աւրուած ըլլալով. բայց որոշ է որ Նորավանքի մօտ էր¹⁷, ինչպէս շատ անգամ կ'ըսէ Օրբելեան: Եւ անոր ամուր եւ անառիկ ըլլալը ցոյց տալու համար կ'ըսէ. «շինեալ անհնարին ամրութեամբ եւ աստուածաստեղծ պարսպօք ամրացեալ»¹⁸:

Արարական տիրապետութեան շրջանին, այս բերդը կ'իյնայ ամիրաներու ձեռքը,

9. Խորենացի, տպ. 1827, էջ 168-169:

10. Անդ, էջ 169:

11. Մովս. Կաղան. տպ. 1860 էջ 92:

12. Ճանապարհ. ի մեծն Հայաստան էջ 152, եւ Ինճիճեան էջ 525-526:

13. Հիւլաքման, անդ, 371:

14. Օրբելեան, էջ 14:

15. Ճանապարհորդութիւն ի մեծն Հայաստան, էջ 152:

16. Օրբելեան, անդ, էջ 234:

17. Սիսական, էջ 180:

18. Օրբելեան, անդ, էջ 14:

և ապա դեպքով մը կ'անցնի հայերուն, ինչպէս կը պատմէ Օրբելեան¹⁹։

Յովհաննէս եպիսկոպոս կը բռնէ Սուրբանին մանուկը, որ ծանր հիւանդ էր. և Սուրբանը մասնաւոր հրամանագրով մը՝ Հրաշկարեղը կը յանձնէ եպիսկոպոսին, իբրեւ ժառանգութիւն Նորավանքի. սակայն ժամանակ մը վերջ, պարսիկները դարձեալ կը դրան և դուրս կը քշեն հայ եպիսկոպոսը. քէշ վերջ խաչենի իշխանները կը կազմակերպուին, և Ախթամար ու Վասակ Օրբելեանները կու դան կը դրան բերդը, որ այնուհետեւ իրենց գերդաստանին կեդրոնատեղին և Օրբելեաններու բերդը կ'ըլլայ։

Օրբելեաններու իշխանութիւնը
Հրաշկարեղի մէջ

ԺԳ. դարուն է որ մէջտեղ կ'ելլեն Օրբելեանները, և իրենց կեդրոնատեղի կ'ընեն Հրաշկարեղը և երկար ժամանակ կ'իշխեն խաչենի և իր շրջակայ երկիրներուն վրայ։ Հրաշկարեղի առաջին տէրը և ժառանգորդը եղած է ԼԻՊԱՐԻՏ, որ դայն ստացած է ԱԹԱՊԷԿ ԻԻԱՆԷՆ, վրաց թագաւորին հրամանով. ասոր կը յաջորդէ ԵԼԻԿՈՒՄ, որուն ժամանակ թաթարները մտան Հայաստան, ԺԳ. դարուն, Ասլան Նոյ զօրավարի առաջնորդութեամբ։

Ելիկում իրեններով կ'ամրանայ Հրաշ-

կարեղի մէջ. Ասլան կու դայ կը պաշարէ և կը նստի. կը շրջի բերդին շուրջը և կը տեսնէ որ անհնարին էր դայն դրան. կ'երթայ բերդին դիմաց և մարդ կը դրկէ Ելիկումին ըսելով. «արա՛ ընդ մեզ սէր, և ե՛կ առ մեզ, և բազում բարութիւնս դոցես ի մէջը. ապա թէ ոչ, մինչեւ ե՞րբ նստցիս ի քարիդ յայդ, մեք չենք գնալոյ յայսմ աշխարհէ, այլ Աստուած հայրենեօք դսա ետ մեզ»։ Այս խօսքերը լսելով՝ Ելիկում համոզուեցաւ և ելաւ ընծաներով անոր ընդառաջ գնաց։ Ասլան իր խօսքը պահելով՝ շատ սիրեց Ելիկումը, և անոր տուաւ ոչ միայն իր բերդը, այլ զինքը իշխան և տէր կարգեց իր շրջակայ հողերուն՝ Վայոց Ձորին և Եղեղեայ։ Ասլանի կը յաջորդէ իր եղբայրը Սմբատ, և միւս եղբայրը Տարսայիճ, որ կտակով մը Հրաշկարեղը իր որդւոյն Ստեփանոսի կը թողու²⁰։

Անկէ վերջ մեր պատմիչները չեն խօսիր Հրաշկարեղի մասին։ Քաջբերունեաց Ամաղու գիւղին մօտերը բերդի մը աւերակները գտնուած են. և շատեր կը համարին որ Հրաշկարեղի մնացորդներն ըլլան. մանաւանդ որ հոն ծառ մը կայ, որ ճգնաւորի տուն կը կոչեն մօտակայ բնակիչները. այս սուրբին անունէն է որ, հաւանաբար, իր անունը առած է այս բերդը՝ ՀՐԱՇԿԱՐԵՂ²¹։

(Շարունակելի)

Հ. ՄԻՔԱՅԷԼ ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆ

ՀԱՅԵՐԷՆ ԳՐԵՐՈՒ ՅՕՐԻՆՄԱՆ ՏԱՐԵԹԻԻԸ

1956 թուին, Շիրակ ամսագրին մէջ¹ յօդուածով մը ուսումնասիրած էի հայերէն գրերու յօրինման ժամանակի հարցը՝ օգտագործելով սկզբնաղբիւրներ և նոր մենագրութիւններ։ Այդ ուսումնասիրութեան մէջ յանգած էի այն եզրակացութեան՝ որ հայերէն տառերու գիւտին ըստ յոյ թուականն է 406։ Նոյն տարուան նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներուն այցի դացի Հայաստան։ Այնտեղ Պատմական Թանգարանի գրի ու գրականութեան բաժնին մէջ տեսայ հայ մշակոյթի կարեւոր թուականներու ցուցատախտակ մը, ուր ըսուած էր հետեւեալը. —

«Հայերէն գրերի յօրինումը 396 թուին, և Հայկական Գրականութեան զարգացումը 4-7րդ դդ.»։

Պատմական Թանգարանի սոյն գրուած-ը ինծի մտածել տուաւ թէ հակառակ մեր հմուտ պատմաբաններ ունենալուն՝ տալիս չիոթ կը մնայ հայերէն գրերու յօրինման տարեթիւը։ Հայ ժողովուրդի պատմութեան հայրենական պաշտօնական ձեռնարկին մէջ² խնդրոյ առարկայ թուականը նշանակուած է 396, մինչ ուրիշ ուսումնասիրութիւններ դայն կը դնեն շուրջ 404-407 տարիներուն³։

Հայկական տառերու գիւտին որպէս ժամանակ 396 թուականը պաշտպանողները առհասարակ ազդեցութեան ներքեւ են

Նիկողայոս Ադոնցի և Յակոբ Մանանդեանի երկասիրութիւններուն։ Ադոնց Մեսրոպ Մաշտոցի կը վերագրէ երկու ճամբորդութիւններ ի Միջագետս.

1. «420 թուականից շատ առաջ» եղած ճանապարհորդութիւն մը՝ ի խնդիր հայերէն տառերու գիւտին⁴։

2. 420-425 թուականներուն⁵, աւելի հաւանաբար 430ին, երկրորդ ճամբորդութիւն մը՝ կրօնական հարցով։ Ադոնց կ'ըսէ. «Հաւանական է, որ Մաշտոցի այցը ասորի եպիսկոպոսներին, որի մասին պատմում է Կորիւն, կապ ունի հաւատոյ խնդրի հետ և մօտ է 430 թուականներին»⁶։

Ադոնց՝ Մաշտոցի առաջին ուղեւորութիւնը կը հիմնէ բիւզանդական աղբիւրէ մը քաղած տեղեկութիւններուն վրայ։ Փոքր պատերազմ իր Գրադարան աշխատութեան մէջ կը յայտնէ թէ Թէոդորոս Մոպսուեստացի (350-428) գրած է գիրք մը՝ Ընդդէմ մոզուքեան, ուղղուած «առ Մաստուրիոս, ծագումով Հայաստանից և ինքն քորեպիսկոպոս»⁷։ Թէոդորոս իր հակադրադաշտական գրութիւնը հեղինակած է երկրորդ թեանը (383-392) շրջանին⁸։ Այս է երկրորդ թեանը՝ Ադոնց կ'ենթադրադայէն մեկնելով՝ Ադոնց կ'ենթադրէ թէ 380ական թուականներուն Մոպսուեստացին օգնած է Մաստուրիոս-Մաշտոցի՝ հայերէն գրերու յօրինման մէջ։

(խմբագրութիւն), Ա. հատոր, Երևան, 1949, էջ 11։ 2. Լուսկոտկա, Գրի զարգացումը, Երևան, 1955, էջ 182։ Ա. Գ. Արաւահամեան, Հայ գրի և գրչութեան պատմութիւն, Երևան, 1959, էջ 51-56։

3. Ադոնց, «Անծանօթ էջեր Մաշտոցի և նրա աշակերտների կեանքից, ըստ օտար աղբիւրների», Հանդէս Ամսօրեայ, 1925, էջ 531-535։

4. Նոյն անդ, էջ 435-437։

5. Նոյն անդ, էջ 535։

6. Նոյն անդ, էջ 195։

8. Նոյն անդ, էջ 441։

1. «Հայերէն գրերու գիւտին ստոյգ տարեթիւը», Շիրակ, Պէյրութ, 1956, թիւ 3, էջ 26-30, և թիւ 4, էջ 136-141։

2. Հայ ժողովրդի պատմութիւն (խմբագրութիւն), Երևան, Ա. հատոր, Ա. հրատարակութիւն, 1951, էջ 127, երկրորդ տպագրութիւն, 1956, էջ 150։ Մաշտոցի կեանքն ու գործունէութիւնը պատմող նոր յօդանոսի մը մէջ ևս հայերէն գրերու յօրինման տարին գրուած է 396. տես Ս. Տ. Մելիք-Բախչեանի և Թ. Խ. Յակոբեանի, Մեսրոպ Մաշտոց, Երևան, 1959, էջ 40։

3. Օրինակ՝ Հայ գրականութեան պատմութիւն

5. — ԲԱԶՄԱՎԷՊ

19. Անդ, էջ 349-350։

20. Սիսական, էջ 180։

21. Օրպելեան, անդ, էջ 360։

